ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Տնօրեն ..... Լ. Մելքումյան
«31» ..... 08 .....-2023 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2024 ուստարի

Պ. Սևակի անվ. հ.123 հիմն. դպրոց

9ա դասարան

Դասղեկ՝ Հ. Չախմախչյան

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) Դասարանը բաղկացած է տասնինը հոգուց: Ընդհանուր առմամբ աշակերտները ունեն բավարար ընդունակություններ: Չկան գերազանց սովորող աշակերտներ:
Դասարանի որոշ աշակերտների սոցիալական վիճակը գնահատվում է ոչ բավարար: Չնայած այս հանգամանքին՝ երեխաները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն: Հաշվի առնելով տարիքային զարգացման առանձնահատկությունները՝ ակնհայտ է դառնում, որ մի շարք դժվարություններ են ի հայտ գալիս լուծման համար անհրաժեշտ է լինել համբերատար, զգոն և հետևողական հնարավոր միջանձնային բախումներն այս տարիքային փուլում բացառելու համար: Յուրաքանչյուրն իր հերթին փորձում է ինքնահաստատվել, որը առիթ է հանդիսանում վեճերի, ընդհարումների:
Իմ նպատակն է՝ աշխատել դասարանի բարձր առաջադիմության ուղղությամբ, ձևավորել կարգապահ, կազմակերպված, հանդուրժող, համերաշխ կոլեկտիվ, նպաստել աշակերտների ընդհանուր մտահորիզոնի ընդարձակմանը, աշխատել բարոյահոգեբանական կերտվածքի զարգացման ուղղությամբ, նպաստել քաղաքացիականության և ուսման նկատմամբ գիտակցական վերաբերմունքի ձևավորմանը, ձևաորել կոլեկտիվ, որտեղ բոլորը հարգում են մեկը մյուսի կարծիքը: Բոլոր աշակերտներն էլ յուրահատուկ են, բանիմաց, հետաքրքրասեր: Նրանցից յուրաքանչյուրն էլ ձգտում է մշտապես լինել ուշադրության կենտրոնում, միշտ լինել առաջինը, որն էլ հաճախ խնդիրների առաջացման պատճառ է հանդիսանում:

1. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին , որպեսզի շտկել այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍԿԶԲԻՆ

- Մաքրել և վերակահավորել դասասենյակը:
- Կազմել աշակերտների ցուցակը և ժամանակավոր դասամատյանը:
- Կազմակերպել դասագրքերի ստացումը գրադարանից և բաշխումը աշակերտներին:
- Կազմել դասասենյակը մաքրելու հերթապահության գրաֆիկ:
- Աշակերտների մանկավարժահոգեբանական հետազոտություն:
- Աշակերտների հետ համատեղ ընտրել տարվա ընթացքում քննարկվելիք թեման և դասղեկիժամերի զրույցների թեմատիկան:
- Ուսումնասիրել աշակերտների ընտանեկան դաստիարակության պայմանները, պատրաստել դասարանի սոցիալական անձնագիրը:
- Ընտրել դասարանի ակտիվ՝ ավագ, օգնականներ:
- Հավաքել սպառիչ տեղեկություններ լրացուցիչ կրթության հաստատություններում, խմբակներում աշակերտների մասնակցության

մասին:

- Ճշտել՝ գրանցվել են արդյո՞ք բոլորը «էլեկտրոնային օրագրում»:
- Ցուցաբերել մանկավարժական աջակցություն աշակերտների ինքնավարությանդասարանական մարմնին (ակտիվին):
- Ընտրել ծնողկոմիտեի անդամներ և նախագահ:
- Հաշվառել «Փարոս» ծրագրում ընդգրկված ընտանիքների երեխաներին:

ԱՄԵՆՇԱԲԱԹՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Էլեկտրոնային մատյանի վարման վերահսկողություն:
- Օրագրերի վարման վերահսկողություն:
- Դասղեկի ժամի վարում, պլանավորված զրույցների անցկացում:
- Հետևել աշակերտների առաջադիմությանը, զրուցել նրանց և նրանց

ծնողների հետ:

- Լսել չառաջադիմող աշակերտներին և համապատասխան որոշումներ կայացնել:
- Զրուցել անհարգելի բացակայող և հաճախակի ուշացող աշակերտների ևնրանց ծնողների հետ:

Ըստ գրաֆիկի հերթապահության կազմակերպում սրահում:

ԱՄԵՆԱՄՍՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Զրուցել դասավանդող ուսուցիչների հետ՝ աշակերտների վարքի նառաջադիմության մասին:
- Ծնողներին տեղեկացնել իրենց երեխաների ստացած գնահատականների մասին, հորդորել, որ օգտվեն էլեկրոնային օրագրերից:
- Կատարել դասալսումներ:
- Լսել դասարանի ավագի հաշվետվությունը, կատարել դաստիարակչականաշխատանքների վերլուծություն:
- Հանդիպել ծնողների հետ:
- Լավ սովորող աշակերտների միջոցով օգնել թույլ աշակերտներին՝ բարձրացնելու առաջադիմությունը:

ԿԻՍԱՄՅԱԿԻ ՎԵՐՋՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Կիսամյակի ամփոփում:
- Կիսամյակային հաշվետվության հանձնում:
- Ծնողական ժողով:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՎԵՐՋՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Տարեկան գնահատականների և դաստիարակչական աշխատանքների ամփոփում:
- Ծնողական ժողով (ծնողներին ներկայացնել տարեվերջյանարդյունքները):
- Տարեկան հաշվետվության հանձնում:
- Դասագրքերի վերանորոգում և հանձնում գրադարան:
- Դասասենյակի մաքրում և հանձնում:
- Երեխաների ծնողներից տեղեկություններ հավաքել նրանց ամառային հանգստիկազմակերպման մասին:
- Աշակերտական ակտիվի, ծնողների հետ կազմակերպել դասարանի ամառայինէքսկուրսիան:
- Լրացնել աշակերտների անձնական գործերը:

2. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք

քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն Հայրենասիրության կրթության վերաբերյալկազմակերպել քննարկումներ : Նշել շարք հայրենասերների անուններ և թվարկել այն

բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստի ձևերը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն : Բացատրել և պահանջել, որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:

3.5 Աշխատանքային դաստիարակություն Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը, որ կարողանագոյատևել ներկայիս դժվար պայմաններում:

3.6 Բնապահպանական դաստիարակություն Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի

բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնքառկա են իրենց շրջապատում դիտարկել այդ խնդիրը գլոբալ առումով:

3. Դպրոց-ընտանիք կապը Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում էպետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	կատարման ժամկետը	Կատարողներ
I	Զրույց «Ինչպես անցկացրեցի ամառը » թեմայի շուրջ	սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
II	«Քաղաքացի լինել նշանակում է...»թեմայով զրույց: Զնավորել բազմակարծություն	սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
III	«Անկախությունը գերագույն արժեք է»թեմայով քննարկում	սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
IV	«Զրույց անխուսափելի պատերազմի և ապագայի մասին»	սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
V	«Կարող եմ օգտակար լինել» թեմայով զրույցը հնարավորություն կտա ձնավորել հարգանք դիմացինի նկատմամբ:	սեպտեմբեր հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
VI	«ՈՒսուցչի դերը հասարակության մեջ» թեմայով զրույց	հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
VII	«Քաղաքացիական ինքնություն» նպատակն է հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները,կիմանան՝ ինչ է քաղաքացիական ինքնությունը:	հոկտեմբեր	աշակերտ դասղեկ

VIII	«Ո՞վ եմ ես, որտեղի՞ց եմ գալիս և ու՞ր եմ գնում» թեմայով զրույց:Նպատակն է աշակերտներին ներկայացնել ծագման և ձևավորման ուղին:	հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
IX	<< Սևանա լճի էկոլոգիական հիմնախնդիրներ >> : Աշակերտներին հանձնարարել հավաքել տեղեկություններ թեմայի շուրջ:	նոյեմբեր	աշակերտ դասղեկ
X	Ռեպորտաժ համայնքային հիմնախնդիրների մասին	նոյեմբեր	աշակերտ դասղեկ
XI	<< Պատասխանատու քաղաքացի>> նպատակն է ձևավորել արժեհամակարգ՝ երկրին պիտանի քաղաքացի լինելու համար:	Նոյեմբեր	աշակերտ դասղեկ
XII	<< Ինչու՞ է պետք ներառումը >> աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողական վերաբերմունք հատուկ կարիքավոր մարդկանց նկատմամբ:	նոյեմբեր	աշակերտ դասղեկ
XIII	<< Ի՞նչ անել երկրաշարժի ժամանակ >> տեսանյութի դիտում	Դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
XIV	<< Լռություն >> թեման հնարավորություն կտա աշակերտների մոտ ձևավորել բարին և դրական հատկանիշները:	դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
XV	<< Կրոնը և բարոյականությունը >> թեմայով բաց քննարկում և վերլուծություն:	դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
XVI	<< Կարողությունների հստակեցում >> նպատակն է աշակերտներին տեղեկացնել թե մարդկությունը ինչ ժամանակաշրջան է անցել:	դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
XVII	<< Ազգային և միջազգային տոներ>> նպատակն է հստակեցնել ազգային տոների առանձնահատկո	հունվա	աշակերտ դասղեկ

	ությունները և ազդեցությունները:	ր	
XVIII	<<Եկեղեցին և ազգը>> քննարկման միջոցով աշա կերտների մոտ կհիմնավորեք եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովր դի կյանքում:	հունվա ր	աշակերտ դասղեկ
XIX	<< Հայոց բանակ >> թեմայով ոգեշնչող դաս:	հունվա ր	աշակերտ դասղեկ
XX	<< Հավերժական շահեր >> քննարկման միջոցով կներկայացվի պետությունների միջև ծագող խնդրիրների պատճառները:	փետրվ ար	աշակերտ դասղեկ
XXI	<< Պոլիէթիլենային տոպրակները և շրջակա միջավայրը >> օգնել սովորողներին գիտակցելու աղբի և թա փոնների վնասակար ազդեցությանը բնության և մարդու առողջության վրա:	փետրվ ար	աշակերտ դասղեկ
XXII	<< Աշխատակից ենք փնտրում >> ներկայացնել և ձևավորել իրենց իրավունքները , որպես մասնագետներ:	փետրվ ար	աշակերտ դասղեկ
XXIII	<< Գնահատիր ինքդ քեզ >> աշակերտների մոտ բարձրացնել ինքնագնահատականը՝ գիտակցելով դիմացինի հանդեպ հարգանքը:	Փետրվ ար	աշակերտ դասղեկ
XXIV	<< Առաջնորդություն >>սովորողների մոտ ձևավորել ճիշտ մտածելակերպ առաջնորդ լինելու մասին :	մարտ	աշակերտ դասղեկ
XXV	<< Ապագայի անիվը >> խթանում է վերլուծելու պատճառահետևանքայ ին կապերը դիտարկելու, դասակարգելու հմտությունները:	մարտ	աշակերտ դասղեկ
XXVI	<< Ի՞նչ է մարդկանց թրաֆիքինգը>> աշակերտները կծանոթանան եզրույթին և կխուսափեն թրաֆիքինգի զոհ դառնալուց:	մարտ	աշակերտ դասղեկ
XXVII	<<Մայր լինել նշանակում է>> զրույց-բանավեճ՝ կանանց միամսյակին նվիրված:	մարտ	աշակերտ դասղեկ

		ապրիլ	
XXVIII	<<Հանդուրժողականություն>>իրավիճակների վերլուծություն :	ապրիլ	աշակերտ դասղեկ
XXIX	<<Բնական պաշարների խնայողություն>> խթանելով աշակերտների ստեղծագործական մտածողությունը ձևավորել բնության և բնական պաշարների հանդեպ խնայող վերաբերմունք	ապրիլ	աշակերտ դասղեկ
XXX	<< Ցեղասպանություն>> աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը : Նրանց մոտ սերմանել հայրենասիրություն:	ապրիլ	աշակերտ դասղեկ
XXXI	<< Ի՞նչ է ռասիզմը>> քննարկում :	ապրիլ մայիս	աշակերտ դասղեկ
XXXII	<<Եղել ենք , կանք ու կլինենք >> Նպատակն է աշակերտների մոտ ձևավորել ազգային գիտակցության արժեհամակարգ և տոկունկամք:	մայիս	աշակերտ դասղեկ
XXXIII	<< Բարեգործության դերը մարդու կյանքում >> սովորողների մոտ ձևավորել ՄԱՐԴ լինելու արժեհամակարգ:	մայիս	աշակերտ դասղեկ
XXXIV	<< Վերջին զանգ>> տարեվերջյան միջոցառում:	մայիս	աշակերտ դասղեկ

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱ

Անցկացման օրը	Դասղեկի անցկացրած միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	ծանոթություն
02.10.23 թ.	«Ուսուցչի դերը հասարակության մեջ»	
09.10.23 թ.	Էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոն	
20.11.23 թ.	Այցելություն Կոմիտասի անվան տուն-թանգարան	
04.12.23 թ.	Զրույց և քննարկում երկրաշարժի և այլ բնական աղետների վերաբերյալ	
22.12.23 թ.	Կազմակերպել և իրականացնել տարեմուտյան միջոցառում (ցերեկույթ)	
22.01.24 թ.	Դասախոսություն և ֆիլմի դիտում Հայոց բանակ թեմայով	
04.03.24թ.	Զրույց գեղեցկության և բարոյականության վերաբերյալ	
08.04.24թ.	Մայրության տոն թեմայով քննարկում	
06.05. 24թ.	Հաղթանակ և պարտություն թեմայով դասախուսություն	